ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳԻՐ

EGPS ԴՐԱՄԱՇՆՈՐՀ No. TFOA6768

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2018թ. ապրիլի 18-ից մինչև 2021թ. օգոստոսի 18-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ

Երևան
Սեպտեմբեր 2021

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳԻՐ

EGPS ԴՐԱՄԱՇՆՈՐՀ No. TFOA6768

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 3-5

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններ
2018թ. ապրիլի 18-ից մինչև 2021թ. օգոստոսի 18-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ

Դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվություն 6

Ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվություն 7

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 8-16

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ 17

BDO

Հեռ. +374 60 528808
info@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Ռ. Սեբաստացի 20/6, 5-րդ
հարկ, ԻՆԳՈՒՆ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել 2018թ. մարտի 20-ին կնքված EGPS No. TFOA6768 Դրամաշնորհային Համաձայնագրով (Նամակ-Համաձայնագիր) ֆինանսավորվող և ՀՀ վարչապետի աշխատակազմի (Վարչապետի աշխատակազմ) կողմից իրականացվող «Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն» ծրագրի (Ծրագիր) հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2018թ. ապրիլի 18-ից մինչև 2021թ. օգոստոսի 18-ն ընկած ժամանակաշրջանի դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվությունը, ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվությունը, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրությունները:

Մեր կարծիքով, Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2018թ. ապրիլի 18-ից մինչև 2021թ. օգոստոսի 18-ն ընկած ժամանակաշրջանի դրամական միջոցների ստացումները և վճարումները՝ համաձայն «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով» Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի (ՀՀՀՀՄՍ-դրամարկղային սկզբունք):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» պարբերությունում:
Մենք անկախ ենք Ծրագրից և Վարչապետի աշխատակազմից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում - Դրամարկղային միջոցների սկզբունքով հաշվետվությունների պատրաստում

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծնթ. 2-ին, որտեղ ներկայացված է, որ այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են դրամարկղային միջոցների սկզբունքով, որի պատճառով, այս հաշվետվությունները կարող են չհամապատասխանել այլ նպատակներով օգտագործման համար:

Հանգամանքի շեշտադրում - Ծրագրի ավարտ

Առանց ձևափոխելու մեր կարծիքը՝ Ձեր ուշադրությունն ենք հրավիրում հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվություններին կից 9-րդ ծանոթագրությանը, որը բացահայտում է, որ Ծրագիրն ավարտվել է հաշվետվությունների ներկայացման ամսաթվի դրությամբ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Վարչապետի աշխատակազմը պատասխանատու է Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված "ՀՀՀՀՄՍ-դրամարկղային սկզբունք" ստանդարտի և Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների Ֆինանսական Ձեռնարկի (ՀԲ ուղեցույց) համաձայն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ղեկավարության կարծիքով, անհրաժեշտ է

Հեռ. +37440 535656
էլ.փոստ: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am
ՀՀ, ք. Երևան,
Գ. Սեբաստացի 2/5, 5-ից
հարկ, տարածք 7

խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած լինելու հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի հաշվետվություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի բոլոր էական խեղաթյուրումները, երբ դրանք առկա են: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություններ և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ՝ Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Մենք, ի թիվս այլ հարցերի, ղեկավարությանը տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ

Նամակ-համաձայնագրի պահանջների պահպանման նպատակով Կարչապետի աշխատակազմը պետք է ապահովի, որ.

1. Ֆոնդերն օգտագործվել են Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ) միջև կնքված Նամակ-համաձայնագրում նշված պայմաններին և Համաշխարհային բանկի համապատասխան ուղեցույցներին համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են:

2. Ծախսերը ապահովված են համապատասխան հիմնավորող փաստաթղթերով, գրանցումներով և հաշիվներով: Փոխհատուցման դիմումներում ներառված և փոխհատուցված ծախսերը ընդունելի են ֆինանսավորման համար՝ համաձայն Նամակ-համաձայնագրի: Ծրագրի կողմից հաշվետու ժամանակաշրջանների վերաբերյալ ներկայացված Միջանկյալ Ֆինանսական Հաշվետվությունները համապատասխանում են հաշվապահական գրանցումներին:
3. Նպատակային հաշիվը վարվել է համաձայն Նամակ-համաձայնագրի պայմանների և Համաշխարհային բանկի համապատասխան ուղեցույցների:
4. Ֆինանսավորվող ապրանքները և ծառայությունները ձեռք են բերվել համաձայն Նամակ-համաձայնագրի պայմանների և Համաշխարհային բանկի համապատասխան ուղեցույցների:

Մեր կարծիքով, 2018թ. ապրիլի 18-ից մինչև 2021թ. օգոստոսի 18-ն ընկած ժամանակաշրջանի ընթացքում Կարչապետի աշխատակազմը պահպանել է նշված պահանջները:

"Բի-Դի-Օ Արմենիա" ՓԲԸ
13 Սեպտեմբերի, 2021թ.

Վահագն Մահակյան, FCCA
Տնօրեն

Գնել Խաչատրյան, FCCA
Աուդիտի ղեկավար

"Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն" ծրագիր
Դրամաշնորհ No.TFOA6768
Դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվություն
2018թ. ապրիլի 18-ից մինչև 2021թ. օգոստոսի 18-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ
(ԱՄՆ դոլար)

		Փաստացի					Նախատեսված	Շեղում	ԾԳՓ
		2018	2019	2020	2021	Ամբողջական առ 18.08.2021	Ամբողջական առ 18.08.2021	Ամբողջական առ 18.08.2021	
Դրամական միջոցների սկզբնական մնացորդ									
Նպատակային հաշիվ (Դրամաշնորհ TFOA6768)		-	4,499.77	41,074.49	50,000.00	-			
Ծրագրի հաշիվ (ՀՀ Կառավարություն)		-	-	-	-	-			
Ընդամենը		**-**	**4,499.77**	**41,074.49**	**50,000.00**	**-**			
Ֆոնդերի աղբյուրները									
Դրամաշնորհ TFOA6768	8.1	94,540.82	76,072.31	122,376.86	38,373.72	331,363.71			
ՀՀ Կառավարության համաֆինանսավորում	8.2	17,534.27	3,082.77	17,051.47	14,611.08	52,279.59			
Ընդամենը		**112,075.09**	**79,155.08**	**139,428.33**	**52,984.80**	**383,643.30**			
Արտարժութային օգուտ /(կորուստ)		(8.57)	54.57	(399.87)	(48.58)	(402.45)			
Ֆոնդերի օգտագործում	7								
1. Ապրանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր ծրագրի շրջանակներում		107,566.75	42,634.93	130,102.95	93,348.48	373,653.11	420,000.00	(46,346.89)	420,000.00
Ընդամենը ծրագրային ծախսեր		**107,566.75**	**42,634.93**	**130,102.95**	**93,348.48**	**373,653.11**	**420,000.00**	**(46,346.89)**	**420,000.00**
Դրամական միջոցների վերջնական մնացորդ	6								
Նպատակային հաշիվ (Դրամաշնորհ TFOA6768)		4,499.77	41,074.49	50,000.00	8,654.89	8,654.89			
Ծրագրի հաշիվ (ՀՀ Կառավարություն)		-	-	-	932.85	932.85			
Ընդամենը		**4,499.77**	**41,074.49**	**50,000.00**	**9,587.74**	**9,587.74**			

Ծովինար Սողոմոնյան
ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ

Լուսինե Թովմասյան
ՀՀ վարչապետի աշխատակազմի ներքո գործող արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության քարտուղարության ղեկավար

13 սեպտեմբերի, 2021թ.

Ծանոթագրությունների 8-16 էջերը կազմում են այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

"Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն" ծրագիր
Դրամաշնորհ No.TFOA6768
Ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվություն
2018թ. ապրիլի 18-ից մինչև 2021թ. օգոստոսի 18-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ
(ԱՄՆ դոլար)

	Փաստացի					Նախատեսված	Շեղում	ԾԳՓ
	2018	2019	2020	2021	Աճողական առ 18.08.2021	Աճողական առ 18.08.2021	Աճողական առ 18.08.2021	
Մաս 1. ԱՇԹՆ Հաշվետվություն և վավերացում	96,243.82	10,668.84	99,909.63	75,423.39	282,245.68	286,300.00	(4,054.32)	286,300.00
Մաս 2. Կարողությունների զարգացում և ներդնում	7,071.09	531.82	-	7,386.10	14,989.01	20,600.00	(5,610.99)	20,600.00
Մաս 3. Հաղորդակցություն և իրազեկում	1,728.16	25,791.82	-	8,082.39	35,602.37	44,400.00	(8,797.63)	44,400.00
Մաս 4. ՇԻրական սեփականության բացահայտում և Ծրագրի կառավարում	2,523.68	5,642.45	30,193.32	2,456.60	40,816.05	68,700.00	(27,883.95)	68,700.00
Ընդամենը ծրագրային ծախսեր	**107,566.75**	**42,634.93**	**130,102.95**	**93,348.48**	**373,653.11**	**420,000.00**	**(46,346.89)**	420,000.00

Ծովինար Սողոմոնյան
ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ

Լուսինե Թովմասյան
ՀՀ վարչապետի աշխատակազմի ներքո գործող արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության քարտուղարության ղեկավար

13 Սեպտեմբերի, 2021թ.
Ծանոթագրությունների 8-16 էջերը կազմում են այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Ծրագիր

2018թ. մարտի 20-ին Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ) միջև ստորագրվել է ֆինանսավորման համաձայնագիր, համաձայն որի ՎԶՄԲ-ն ՀՀ-ին է տրամադրել No. TFOA6768 Դրամաշնորհ՝ 350,000 ԱՄՆ դոլար գումարով:
Դրամաշնորհային համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2018թ. ապրիլի 18-ին:

Դրամաշնորհը տրամադրվել է «Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն» ծրագրի (Ծրագիր) իրականացման համար:

Դրամաշնորհային նամակ-համաձայնագրով Ծրագրի ավարտման վերջնաժամկետ է սահմանվել 2020թ. ապրիլի 30-ը: Համաձայն 209 թվականի դեկտեմբերի 16 -ի նամակի՝ ՀԲ-ն Ծրագրի ավարտը երկարաձգել է մինչև 2021 թվականի հունվարի 31-ը, այնուհետև՝ համաձայն 2021 թվականի հունվարի 11-ի նամակի՝ Ծրագրի ավարտը երկարաձգվեց մինչև 2021 թվականի հուլիսի 31-ը: Փոխհատուցման դիմումների ներկայացման արտոնյալ ժամանակաշրջանը Ծրագրի ավարտից հետո չորս ամիս է:

1.2. Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ-ին՝ բարձրացնել հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը՝ կիրառելով Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) ստանդարտը:
Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

Մաս 1. ԱՃԹՆ Հաշվետվություն և վավերացում,

Խորհրդատուների ծառայությունների մատուցում՝ ԱՃԹՆ-ի առաջին երկու զեկույցի հրապարակման համար՝ ԱՃԹՆ չափանիշներին համապատասխան, ներառյալ անհրաժեշտ բարեփոխումների իրականացումը՝ ԱՃԹՆ-ի առաջին վավերացման համար անհրաժեշտ բոլոր պահանջները բավարարելու համար:

Մաս 2. Կարողությունների զարգացում և ներդրում,

Կարողությունների զարգացման գործունեության աջակցության տրամադրում, ներառյալ.

ա) մասնակցություն ԱՃԹՆ միջազգային և տարածաշրջանային համաժողովներին, վերապատրաստման միջոցառումներին և հանդիպումներին,
բ) վերապատրաստում և սեմինարներ անցկացնել ԱՃԹՆ ստանդարտի որոշակի մասերի համար, և

գ) շահագրգիռ կողմերի համար համապարփակ գործունեության ակտիվացում՝օգտագործելով վեբ կայքի բաց տվյալների գործիքները:

Մաս 3. Հաղորդակցություն և իրազեկում,

ԱՃԹՆ ստանդարտի իրականացմանն աջակցելու համար մի շարք հեղինակային արշավների և իրազեկման միջոցառումների կազմակերպում, ներառյալ կոնֆերանսներ, խորհրդի նիստեր, հրապարակումներ և ինտերնետային և սոցիալական լրատվամիջոցների գործունեություն:

Մաս 4. Իրական սեփականության բացահայտում և Ծրագրի կառավարում:

Աջակցություն օգտակար հանածոների ոլորտի իրական շահառուների բացահայտման գործընթացին 'անհրաժեշտ իրավական փոփոխությունների և համակարգչային ծրագրի գրանցման և տեղադրման միջոցով, ներառյալ Ծրագրի կառավարման գործառնական ծախսերի ապահովումը:

1.3. Ծրագրի բյուջե և ֆինանսավորում

Ծրագիրը ֆինանսավորվում է հետևյալ աղբյուրներից.

- No.TFOA6768 Դրամաշնորհ-100% առանց հարկերի,
- Հայաստանի Հանրապետության կառավարություն (ՀՀ կառավարություն)-հարկեր:

Կատեգորիա	Դրամաշնորհ No.TFOA6768	ՀՀ կառավարություն	Ընդամենը
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
1. Ապրանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր ծրագրի շրջանակներում	350,000.00	70,000.00	420,000.00
Ընդամենը	**350,000.00**	**70,000.00**	**420,000.00**

1.4. Ծրագրի իրականացում

Ծրագիրն իրականացվել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության "Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն" (ԱՖԾԿԿ) պետական հիմնարկի կողմից: ՀՀ կառավարության 2018թ. Դեկտեմբերի 13-ին թվագրված թիվ 1427-Ն որոշման համաձայն՝ 2019թ. Մարտի 31-ից դադարեցվել է ԱՖԾԿԿ գործունեությունը: Սահմանվել է, որ ԱՖԾԿԿ գործառույթները շարունակելու է իրականացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը՝ ծրագրերի իրականացման վարչություն՝ աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման միջոցով:
ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ին թվագրված թիվ 1919-Ն որոշման համաձայն սահմանվել է, որ Ծրագրի գործառույթները շարունակելու է իրականացնել Հայաստանի

Հանրապետության վարչապետի աշխատակազմը (Աշխատակազմ):

Աշխատակազմի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 10, Կառավարական տուն 1:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

2.1. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված §Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով¦ Հանրային Ոլորտի Հաշվապահական Հաշվառման Ստանդարտի համաձայն, և ներկայացվել են Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների Ֆինանսական Ձեռնարկին՝ §RM 3-Ֆինանսական Հաշվետվողականություն և Աուդիտ¦-ին (մարտ, 2010) համապատասխան:

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները ներառում են.
- դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվությունը,
- ըստ ծրագրի բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվությունը,
- հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն ներկայացված ժամանակաշրջանների համար:

2.2 Հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունք

Ծրագրի ֆինանսավորումը ճանաչվում է դրամական միջոցների ստացման պահին: Ծրագրի ծախսումները ճանաչվում են որպես Ծրագրի ծախսեր դրանց վճարման պահին:

2.3 Ներկայացման արժույթը

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը ԱՄՆ դոլարն է (USD):
Տեղական արժույթով (ՀՀ դրամ, AMD) կատարված ՀՀ Կառավարության համաֆինանսավորումը և ծախսերը փոխարկվում են ԱՄՆ դոլարի գործարքի օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից սահմանված փոխարժեքով:
Փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը տեղական արժույթով պահվող դրամական միջոցների վրա ներկայացվում է առանձին տողով Դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվության մեջ:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը՝ 1 ԱՄՆ դոլար=483.75:
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը՝ 1 ԱՄՆ դոլար=479.70

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը՝ 1 ԱՄՆ դոլար=522.59
2021թ. օգոստոսի 18-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը՝ 1 ԱՄՆ դոլար=491.08

2.4. Հարկեր

Ծրագրի շրջանակներում հարկերը վճարվում են ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

2.5. Բյուջե

Ծախսերի բյուջեն կազմվում է նախորդ ժամանակաշրջանի փաստացի կուտակային ծախսերին գումարելով պլանավորումը հաշվետու ժամանակաշրջանի համար՝ ըստ թարմացված գնումների պլանի:

3. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌՀԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (SOE և SUMMARY SHEET)

2018թ. ապրիլի 18-ից մինչև 2021թ. օգոստոսի 18-ն ընկած ժամանակաշրջանի

Դիմումի համարը	Դիմումի հաստատման ամսաթիվը	Ծախսային հոդված	
		1.Ապրանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր ծրագրի շրջանակներում	Ընդամենը
		ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
2	26.11.2018	44,540.82	44,540.82
3	16.01.2019	45,500.23	45,500.23
4	29.03.2019	26,021.07	26,021.07
5	22.08.2019	4,551.01	4,551.01
6	30.12.2019	8,925.51	8,925.51
7	30.06.2020	31,686.01	31,686.01
8	22-Oct-2020	39,776.99	39,776.99
9	29-Dec-2020	41,988.35	41,988.35
10	08-Jul-2021	23,373.72	23,373.72
12	04-Aug-2021	48,451.45	48,451.45
14	17-Aug-2021	7,893.66	7,893.66
Ընդամենը		**322,708.82**	**322,708.82**

4. Նպատակային հաշվի հաշվետվություն

Հաշվարկային հաշիվ	900000904327
Բանկ	Կենտրոնական գանձապետարան
Հասցե	Մելիք- Ադամյան 1, Երևան , Հայաստանի Հանրապետություն, 0010
Արժույթը	ԱՄՆ դոլար

Դրամաշնորհ No.TFOA4449

	31.12.2018 թ. ավարտվող ժ/շ	31.12.2019թ. ավարտվող տարի	31.12.2020 թ. ավարտվող տարի	18.08.2021թ. ավարտվող ժ/շ	Ընդամենը
1. Սկզբնական մնացորդ	-	4,499.77	41,074.49	50,000.00	-
2. Ավելացում. սկզբնական անհամապատասխանություն	-	-	-	-	-
3. ՎՀՄԲ ֆոնդի կանխավճար/համալրում	94,540.82	76,072.31	122,376.86	38,373.72	331,363.71
4. Նվազեցում. Նպատակային հաշվից մարում ՎՀՄԲ-ին	-	-	-	-	-
5. Նպատակային հաշվին համալրված գումարի ներկա մնացորդը	**94,540.82**	**80,572.08**	**163,451.35**	**88,373.72**	**331,363.71**
6. Նպատակային հաշվի վերջնական մնացորդը	4,499.77	41,074.49	50,000.00	8,654.89	8,654.89
7. Ավելացում. Վճարված ընդունելի ծախսերի գումար	90,041.05	39,497.59	113,451.35	79,718.83	322,708.82
8. Նվազեցում. Ստացված տոկոսներ (եթե կրեդիտագրվել են նպատակային հաշիվ)	-	-	-	-	-
9. Ընդամենը հաշվառված համալրում	**94,540.82**	**80,572.08**	**163,451.35**	**88,373.72**	**331,363.71**
10. Տարբերություն (5)-(9)	-	-	-	-	-

5. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ներառում է ակտիվները, պարտավորությունները և Ծրագրի զուտ ակտիվները հաշվետու ամսաթվի դրությամբ: Հաշվետվությունը պատրաստված է հաշվեգրման սկզբունքով, որտեղ գործարքները ճանաչվում են կատարման պահին (այլ ոչ՝ ստացման կամ վճարման պահին):

		18.08.2021 ԱՄՆ դոլար	31.12.2020 ԱՄՆ դոլար	31.12.2019 ԱՄՆ դոլար	31.12.2018 ԱՄՆ դոլար
ԱԿՏԻՎՆԵՐ					
Դրամական միջոցներ	6	9,587.74	50,000.00	41,074.49	4,499.77
Կանխավճարներ		-	-	-	-
Ընդամենը ակտիվներ		**9,587.74**	**50,000.00**	**41,074.49**	**4,499.77**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Կրեդիտորական պարտավորություններ		-	-	-	-
Ընդամենը պարտավորություններ		-	-	-	-
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ					
Աճողական մուտքեր	8				
Դրամաշնորհ No.TFOA6768		331,363.71	292,989.99	170,613.13	94,540.82
Հայաստանի Կառավարություն		52,279.59	37,668.51	20,617.04	17,534.27
		383,643.30	**330,658.50**	**191,230.17**	**112,075.09**
Աճողական Ծախսումներ					
Ծրագրի ծախսումներ		(373,653.11)	(280,304.63)	(150,201.68)	(107,566.75)
		(373,653.11)	**(280,304.63)**	**(150,201.68)**	**(107,566.75)**
Արտարժույթի փոխարժեքային օգուտ/(վնաս)		(402.45)	(353.87)	46.00	(8.57)
Ընդամենը զուտ ակտիվներ		**9,587.74**	**50,000.00**	**41,074.49**	**4,499.77**

6. Դրամական միջոցներ

	Բանկ	արժույթը	18.08.2021 ԱՄՆ դոլար	31.12.2020 ԱՄՆ դոլար	31.12.2019 ԱՄՆ դոլար	31.12.2018 ԱՄՆ դոլար
Նպատակային հաշիվ (Դրամաշնորհ No.TFOA6768)	Գանձապետարան	ԱՄՆ դոլար	8,654.89	50,000.00	41,074.49	4,499.77
Ծրագրի հաշիվ (ՀՀ Կառավարություն)	Գանձապետարան	ՀՀ դրամ	932.85	-	-	-
Ընդամենը			**9,587.74**	**50,000.00**	**41,074.49**	**4,499.77**

7. Ծրագրային ծախսեր

7.1. Ծրագրային ծախսերի բաշխումը ըստ ֆոնդերի

Ծախսային հոդված	Դրամաշնորհ No.TFOA6768	ՀՀ Կառավարություն	Ընդամենը
	ԱՄՆ դոլար	*ԱՄՆ դոլար*	*ԱՄՆ դոլար*
	31.12.2018 ավարտվող ժ/շ		
1.Ապրանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր ծրագրի շրջանակներում	90,041.05	17,525.70	**107,566.75**
Ընդամենը	**90,041.05**	**17,525.70**	**107,566.75**
	31.12.2019 ավարտվող տարի		
1.Ապրանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր ծրագրի շրջանակներում	39,497.59	3,137.34	**42,634.93**
Ընդամենը	**39,497.59**	**3,137.34**	**42,634.93**
	31.12.2020 ավարտվող տարի		
1.Ապրանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր ծրագրի շրջանակներում	113,451.35	16,651.60	**130,102.95**
Ընդամենը	**113,451.35**	**16,651.60**	**130,102.95**
	18.08.2021 ավարտվող ժ/շ		
1.Ապրանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր ծրագրի շրջանակներում	79,718.83	13,629.65	**93,348.48**
Ընդամենը	**79,718.83**	**13,629.65**	**93,348.48**
	Աճողական առ 18.08.2021		
1.Ապրանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր ծրագրի շրջանակներում	322,708.82	50,944.29	**373,653.11**
Ընդամենը	**322,708.82**	**50,944.29**	**373,653.11**

7.2. Ծրագրային ծախսերի բյուջեի կատարում

Ծախսային հոդված	Աճողական ծախսումներ 18.08.2021թ. դրությամբ	Ընդամենը բյուջե	Կատարում
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	%
1.Ապրանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր ծրագրի շրջանակներում	373,653.11	420,000.00	89%
Ընդամենը	**373,653.11**	**420,000.00**	**89%**

8. Ֆինանսավորում

8.1. Դրամաշնորհ No.TFOA6768

	31.12.2018 ավարտվող ժ/շ	31.12.2019 ավարտվող տարի	31.12.2020 ավարտվող տարի	18.08.2021 ավարտվող ժ/շ	աճողական առ 18.08.2021
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Կանխավճար / (մարում)	50,000.00	(8,925.51)	8,925.51	(41,345.11)	**8,654.89**
SOE և Summary Report	44,540.82	84,997.82	113,451.35	79,718.83	**322,708.82**
Ընդամենը	**94,540.82**	**76,072.31**	**122,376.86**	**38,373.72**	**331,363.71**
Ընդամենը բյուջե Առ 18.08.2021 տրամադրված ֆինանսավորում					**350,000.00**
%					**95%**

8.2. ՀՀ Կառավարություն

	31.12.2018 ավարտվող ժ/շ	31.12.2019 ավարտվող տարի	31.12.2020 ավարտվող տարի	18.08.2021 ավարտվող ժ/շ	աճողական առ 31.12.2020
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Ֆինանսավորում	17,534.27	3,082.77	17,051.47	14,611.08	52,279.59
	17,534.27	**3,082.77**	**17,051.47**	**14,611.08**	**52,279.59**
Ընդամենը բյուջե առ 18.08.2021 տրամադրված ֆինանսավորում					**70,000.00**
%					**75%**

9. Ծրագրի ավարտ

Ծրագիրն ավարտվել է 2021թ. հուլիսի 31-ին (Ավարտման ամսաթիվ), և գործարքները ավարտվել են 2021թ. Օգոստոսի 18-ին (Հաշվետվության ամսաթիվ):

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ (օգոստոսի 18, 2021).

ա. Ծրագրի ավարտման ամսաթվից հետո այլ ծախսեր, բացի վերջնական աուդիտից, չեն կատարվել, արտոնյալ ժամանակահատվածում վճարումները վերաբերում են մինչև Ավարտման ամսաթիվը կատարված ծախսերին,
բ. Հաշվետվության ամսաթվից հետո TFOA6768 Դրամաշնորհի գծով առհանումներ չեն կատարվել,
գ. Հաշվետվության ամսաթվից հետո չկան ՀԲ-ին ներկայացված Ծրագրին վերաբերվող ծախսեր,
դ. Հաշվետվության ամսաթվի դրությամբ չկան Ծրագրին առընչվող կանխավճարների և կրեդիտորական պարտքերի մնացորդներ,
ե. Հաշվետվության ամսաթվին դրամական միջոցների մնացորդները իրենցից ներկայացնում են.
- Նպատակային հաշվի 8,654.89 ԱՄՆ դոլար մնացորդը, աուդիտորական ծառայության դիմաց վճարելուց հետո մնացած գումարը ենթակա է վերադարձման Համաշխարհային բանկին,
- Ծրագրի հաշվի (ՀՀ Կառավարության համաֆինանսավորման) 932.85 ԱՄՆ դոլար մնացորդը նախատեսված է աուդիտորական ծառայության համաֆինանսավորման գումարը վճարելու համար,
զ. Մենք տեղյակ չենք Ծրագրի դեմ որևէ սպասվող կամ փաստացի դատական հայցի մասին:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՁԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ

"Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն" ծրագիր

Դրամաշնորհ No.TFOA6768

2018թ. ապրիլի 18-ից մինչև 2021թ. օգոստոսի 18-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ

ԱՄՆ ԴՈԼԱՐ

Ծախսային հոդված	Դիմում	Ծրագիր	ՀԲ	Տարբերություն
Կանխավճար / (մարում)	1	50,000.00	50,000.00	-
	6	(8,925.51)	(8,925.51)	-
	8	8,925.51	8,925.51	-
	12	(48,451.45)	(48,451.45)	-
	13	15,000.00	15,000.00	-
	14	(7,893.66)	(7,893.66)	-
		8,654.89	**8,654.89**	-
1.Ապրանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր ծրագրի շրջանակներում	2	44,540.82	44,540.82	-
	3	45,500.23	45,500.23	
	4	26,021.07	26,021.07	
	5	4,551.01	4,551.01	
	6	8,925.51	8,925.51	
	7	31,686.01	31,686.01	-
	8	39,776.99	39,776.99	-
	9	41,988.35	41,988.35	-
	10	23,373.72	23,373.72	-
	12	48,451.45	48,451.45	-
	14	7,893.66	7,893.66	
		322,708.82	**322,708.82**	
Ընդամենը		**331,363.71**	**331,363.71**	-